ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԲԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՋԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Համայն Անգլիո եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերը, դեպի Ճապոնիա Իր կատարած հովվական այցելության ճանապարհին, մարտի 26-ին, հինգ օրով մնացել է Կալկաթայում, որպես հյուրը Հնդկաստանի անգլիկան եպիսկոպոս Արաբինդո Ջադերջիի և մարտի 27-ին, Ավագ ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, այցելել է Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցին և ընդունվել հանդիսավորապես Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի, քահանայական դասի, եկեղեցական վարչության անդամների և հավատացյալների հոծ բազմության կողմից և «Հրաշափառով» առաջնորդվել եկեղեցի։

Եկեղեցական արարողության ավարտին, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը, հանուն Հնդկահայ թեմի հոգևորականության և հայ համայնքի, բարի գալստյան սրտագին խոսք է ասել մեծանուն հյուրին.

«Մեր և մեր համայնքի անունով սրտագին բարի գալուստ կմաղթենք Ձերդ Գերապատվության և կփութանք հայտնել խորին շնորհակալություն՝ եղական և անմոռանալի սույն այցելությամբ մեզ շնորհված պատվին համար, որ բոլորիս կպատճառե անսահման ուրախություն։

Ձերդ Սրբազնությունն Իր ամենաթանկագին ժամանակեն մաս մը տրամադրելով, հանձն առավ այցելել մեզ և այս ձևով պատեհություն տվավ մեզի՝ անգամ մը ևս արտահայտելու այն համակրանքի ու մեծարանքի ջերմ զգացումը, զոր Հայ Եկեղեցին կտածե Ձեր բարձր անձին հանդեպ։

Քրիստոնեության պաշտպանության համար մեր ժողովուրդի խաղացած դերը ծանոթ է Ձերդ Սրբազնության։ Հին և խավար տարիներուն հայերը այս հեռավոր ափերու վրա ևս բերած են Քրիստոսի Ավետարանը և հարատև նախանձախնդրությամբ պահպանած՝ իրենց հայրերու հավատքը։ Այս եկեղեցին, որուն մեջ կգտնվինք այժմ և որ այս մեծ քաղաքի, Կալկաթայի հնագույն քրիստոնեական աղոթավայրն է, մեր ժողովուրդի հավատքի խորհրդանշաններեն մին կհանդիսանա։

Ձերդ Սրբազնության ներկայությունը այսօր մեր մեջ՝ բացառիկ նշանակություն ունի մեզ համար։ Այս առթիվ Ձերդ Սրբազնության կհայտնենք մեր ջերմ շնորհակալություններն ու երախտագիտական զգացումը։

Խորապես զգածված ենք և գոհունակությամբ և հպարտությամբ միշտ պիտի հիշենք այս անմոռանալի օրը։ Ձերդ Սրբազնության կներկայացնենք մեր անկեղծ բարեմաղթությունները Ձեր ներկա բացառիկ և պատմական նշանակություն ունեցող հովվական այցելության նպատակներու և առաջադրություններու կատարյալ հաջողության համար, որոնք շատ մեծ կարևորություն ունին Անգլիկան Եկեղեցվո, ինչպես նաև մյուս քրիստոնյա եկեղեցիներու բարօրության և հառաջդիմության համար։

Պատիվն ունինք ըլլալու Ձերդ Սրբազնության եղբայրն ի Քրիստոս։ Բարի եկաք Աստուծո այս սուրբ տունը»։

Գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի ողջույնի ջերմ խոսքերին պատասխանեց Քենտրբերիի արքեպիսկոպոսը և ասաց.

«Սիրեցյա՛լ եղբայր Իմ ի Քրիստոս, և դուք բոլորդ՝ այս համայնքի և այս եկեղեցվո զավակներ։

Նախ կողջունեմ ձեզ Անգլիո և բոլոր անգլիկան եկեղեցիներու անունով, որպես մեր ավագ եղբայրները, հիշելով այն իրականությունը, որ Դուք Անոր հոտեն ներս բերվեցաք նախքան Անգլիո քրիստոնեական հաղորդավ, քաջալերված՝ Հայ Եկեղեցվո հետ ունեցած մեր հինավուրց բարեկամութենեն, բարեկամություն մը, որ ինձմե շատ առաջ Անգլիո եկեղեցվույն սկզբնական շրջանեն սկսած է։

Այս վերջին տարիներուն միշտ սերտ կապեր գոյություն ունեցած են մեր միջև և մենք բաժնած ենք մեր ցավերն ու ուրախությունները իրար հետ։ Ահա այդ հինավուրց բարեկամության բացորոշ մեկ ապացույցն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելու-

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՍՈՂԻԿ ՍՐԲԱԶԱՆԻ, Տ. ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ։

վատքն ընդունիլն ու անոր մեջ հաստատվիլը։

Խորապես կհուզե զիս այն հանգամանքը, որ Քենտրբերիի արքեպիսկոպոսի մը կողմե այս երկրին և քաղաքին տրված առաջին այցելության ժամանակ ուրախությունը ունեցա ձեր կողմե ընդունվելու և աղոթելու այս սուրբ տաճարին մեջ, կատարելով մեր խոնարհության, հնազանդության և աղոթքի պարտքը Տեր Հիսուս Քրիստոսին։ Եվ առաջինը կխոստովանիմ, որ պատրաստ եմ ընելու այս, ոչ թե հանկարծական զգացումե մը տարված, այլ ինչպես Ձերդ Սրբազնությունն

թյունը Մեզ, Անգլիո մեջ։ Եթե ես Քենտրբերիի առաջին արքեպիսկոպոսն եմ այստեղ այցելող, ապա ուրեմն Վազգեն Կաթողիկոսը առաջին Ամենայն Հայոց Հայրապետն էր, որ ոտք դրած ըլլա Անգլիո հողին վրա։ Ի՞նչ մխիթարական էր տեսնել, թե Մենք ոչ մեկ ճիգ թափեցինք բարեկամություն ստեղծելու, Մենք արդեն բարեկամներ էինք առաջին իսկ հանդիպումեն։ Մեզմե անոնք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդիպելու և Անոր հետ խոսելու ուրախությունը ունեցան, տեսան, որ իրապես Մեր միջև որևէ կարգի արգելքներ չկային, այլ Մենք իրա-

պես եղբայրներ ենք Քրիստոսի շարշարանքներով միացած և Անոր հարութեամբ զորացած։ Մենք Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուրախ սրտով ճանապարհ մաղթեցինք, երբ կվերադառնար դեպի իր մեծ գործը, զոր կկատարե Ան ամբողջ աշխարհի մեջ ցրված բոլոր հայ եկեղեցիներու համար։

Ինձի այնպես կթվի, որ Իմ այս այցելությունը խորհրդանշական օրինակ պիտի ծառայե եկեղեցիները իրար միացնելու, անձնական բարեկամության անխորտակելի կապով։

Խորապես կհուզե զիս այսօր, Ավագ ուրբաթ օրը, Իմ այցելությունը այստեղ։ Այսօր կհիշենք մեր Տիրոջ շարշարանքները, որոնք փրկություն բերին մարդկության, և չկա քրիստոնյա աշխարհի մեջ եկեղեցի մը, որ ավելի տառապած ըլլա, քան Հայոց Եկեղեցին։ Հայոց Եկեղեցին դարերու ընթացքին ենթարկվեցավ շարշարանքներու, բռնության, մարտիրոսացման և գերության։ Բայց այդ բոլորով հանդերձ ոչինչ կրցավ ընկճել ձեր քրիստոնեական ոգին և հավատքը։ Դուք մեր Տիրոջը ծառայած եք ձեզ բաժին ինկած միակ ճանապարհով, այսինքն տառապանքի ճանապարհով։

Երբ կմտածեմ Հայ Եկեղեցվո մասին, կմտաբերեմ, որ դարերու ընթացքին դուք կրած եք շատ շարշարանքներ և կորած եք Հայ Եկեղեցվո հավատքի վկաները։ Ուրեմն այս Ավագ ուրբաթ օրը կողջունեմ ձեզ այն խորունկ գիտակցությամբ, որ դուք ևս մեզ հետ, և կրնամ ըսել նույնիսկ մեզմե շատ ավելի ծանր տառապանքի բաժինով մը, տված եք Քրիստոսի վկայությունը։

Ցավ կզգամ հայտարարելով, որ տակավին քրիստոնեական բոլոր եկեղեցիներուն մեջ կան անհամաձայնություններ։ Չեմ մոռնար նաև, որ ներկայիս Երուսաղեմի Հայոց Եկեղեցին մեջ ցավալի վիճակ մը կտիրե, իբր արդյունք, ինչքան Ինձ հայտնի է, զուտ քաղաքական հակասության մը, որ առնչություն չունի մեզ իրարու կապող հավատքի հետ։ Իմ միտքը և սիրտը համակրանքով լեցված են դեպի ձեր եղբայրներեն մեկը՝ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը՝ Երուսաղեմի Հայոց Եկեղեցվո ընտրյալ ձեր պատրիարքը, որ արտոնված չէ իր Աթոռը գրավելու քաղաքական այս տակնուվրայության պատճառով, որ նաև տագնապներ առաջացուցած է բոլոր երկիրներու եկեղեցիներու մեջ։ Ես ուրախ եմ, որ անձնապես բարեկամ եղած եմ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին և Անգլիայի մեջ Մեր գործերեն մեկը եղած է օգնության հասնիլ անոր և Եկեղեցվո դժբախտության օրերուն։ Ես չեմ վարանիր այս ըսելու, որովհետև Իմ ըսածներեն ոչ մեկը վստահաբար կհակասե Վազգեն Կաթողիկոսի տեսակետին, որովհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը անընդհատ կաշխատի Հայ Եկեղեցվո միասնության համար։

Ուրեմն, այս Ավագ Ուրբաթ օրով, կողջունեմ ձեզ քրիստոնեական խորունկ սիրով և հարգանքով համակված, հիշելով, որ դուք, Հայ Եկեղեցվո զավակներդ, դարերու ընթացքին բազմաթիվ վկաներ եք տված քրիստոնեական հավատքի համար։ Եվ այսօր ալ բաղում դժվարություններու մեջեն կանցնիք, սակայն կմնաք որպես անդրդվելի վկաները Քրիստոսի հավատքին, զոր Ան հայտնեց և հռչակեց խաչին վրա մեզ համար հարության սիրով, զոր միայն քրիստոնեական հավատքը կրնա տալ։ Եղբայր, կողջունեմ ձեզ մեր Փրկչի անունով»։

Քենտրբերիի Արքեպիսկոպոսի՝ Կալկաթայի Հայոց Ս. Նազարեթ եկեղեցուն տված պատմական այցելության կապակցությամբ, որպես հիշատակ, հնդկահայ համայնքի անունից, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը դոկտ. Զեոֆֆրի Ֆիշերին նվիրեց ոսկե խաչ։

Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, զգացված այս ջերմ ընդունելությունից, հրաժեշտ առավ սրբազանից և բոլոր ներկաներից լավագույն տպավորություններով, օրհնելով Հայոց Եկեղեցուն և հայ հավատացյալներին։